ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԳՐԱՎՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

Պաշտոնի հակիրճ նկարագիրը.

1. Գործառույթներ.

Բաժնի հարկադիր կատարողը՝

1) Ոչ աշխատանքային օրերին իրականացնում է կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը,

2) Համապատասխան բաժնի հետ համատեղ՝ իրականացնում է պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու գործընթացը՝ գույքի վրա արգելանք դնելու, սահմանափակում կիրառելու (շարժական գույքի նկատմամբ), այն առգրավելու և հարկադիր իրացնելու (աճուրդ կամ ուղղակի վաճառք) միջոցով.

3) Իրականացնում է կատարողական գործողությունների ընթացքում առգրավված գույքի պահպանությունը.

4) Ապահովում է առգրավված գույքը հատուկ պահպանվող տարածք տեղափոխելու և դրա փաստացի վիճակի արձանագրման գործընթացի նկատմամբ.

5) Իրականացնում է կատարողական վարույթի կողմերի և այլ շահագրգիռ անձանց ահազանգներին առավելագույն արագ և օպերատիվ կերպով արձագանքելու համար շուրջօրյա հերթապահություն՝ ըստ հերթափոխերի.

6) Իրականացնում է օպերատիվ արձագանք պահանջող մի շարք կատարողական գործողություններ, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերին.

7) Իրականացնում է հատուկ պահպանվող տարածքի կամ Ծառայության վարչական շենքում այդ գույքի պահպանության համար առանձնացված վայրի հսկողություն.

գույքը հատուկ պահպանվող տարածքից կամ Ծառայության վարչական շենքում այդ գույքի պահպանության համար առանձնացված վայրից դուրս բերելը համապատասխան հիմքերի առկայության դեպքում,

8) Իրականացնում է գույքի պահպանության համար կատարվող ծախսերի հաշվառումը՝ համապատասխան բաժնի աշխատակիցների հետ համատեղ.

9) Իր իրավասությունների սահմաններում անհրաժեշտության դեպքում համագործակցում է այլ կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների աշխատակիցների հետ.

10) Իրականացնում է Բաժին ներկայացված դիմում-բողոքների ըստ էության քննարկում և օրենքով սահմանված ժամկետում պատասխանի նախագծի պատրաստում.

2.Պաշտոնին ներկայացվող պահանջը.

Աշխատանքային ստաժ և աշխատանքի բնագավառում փորձ չի պահանջվում:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 2020 թվականի հուլիսի 30-ի N 461-Ն որոշմամբ: